

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ, ԲԱՎՐԱՅԻ ԵՎ ԳՈԳԱ-
ՎԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ)» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԹԻՎ 3 ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈ-
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի,
Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապե-
տության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրա-
պետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական
դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2016 թվականի մարտի 22-ին և 2016 թվականի ապրիլի 15-ին ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն. Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 8 հունիսի 2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն. Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխությունն ստորագրվել է Եվրոպական ներդրումային բանկի կողմից 2016թ. մարտի 22-ին, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից՝ 2016թ. ապրիլի 15-ին՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2012 թվականի օգոստոսի 7-ին Երևանում ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն) (Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի (Բանկ) միջև 2012 թվականի օգոստոսի 7-ին Երևանում ստորագրված՝ «Սահ-

մանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն) (Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի ԱԺՈ-038-Ն որոշմամբ (ՄԴՈ-1055):

3. Ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխությամբ նախատեսվում է ավելացնել նշված Ֆինանսական պայմանագրով տրամադրված վարկի 30.316.000 եվրո գումարը 534.000 եվրո գումարի չափով, ինչի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի 30.850.000 եվրո:

4. Ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի (Բանկ) միջև 2012 թվականի օգոստոսի 7-ին Երևանում ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն. Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրի 30.316.000 եվրո գումարն ավելանում է 534.000 եվրո գումարի չափով՝ կազմելով 30.850.000 եվրո:

Այսպիսով, վերոնշյալ 534.000 եվրո գումարի ներգրավումը Հայաստանի Հանրապետության համար առաջացնում է լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ:

5. Փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Ֆինանսական պայմանագրի Ներածական 3-րդ դրույթը, Ներածական 4-6-րդ դրույթները, 1.01 հոդվածը փոփոխել և ընդունել Փոփոխությամբ սահմանված բովանդակությամբ:

6. Փոփոխությամբ, ի թիվս այլնի, Հայաստանի Հանրապետությունը հաստատում է, որ Ֆինանսական պայմանագրի 6-րդ հոդվածի ներքո (Վարկառուի հանձնառություններ և հաստատումներ) Հայաստանի Հանրապետության կողմից կատարման ենթակա կամ կրկնված հաստատումներն ու երաշխիքներն ստույգ են բոլոր առումներով՝ Հայաստանի Հանրապետության կողմից Փոփոխության

նամակի համաստորագրման ամսաթվի դրությամբ, ինչպես նաև համաձայնում է, որ Ֆինանսական պայմանագրի 11-րդ հոդվածը (Օրենք և ընդդատություն) համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis) կիրառվում է Փոփոխության նամակի և Հայաստանի Հանրապետության կողմից դրա պայմանների ընդունումից բխող համաձայնության նկատմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2016 թվականի մարտի 22-ին և 2016 թվականի ապրիլի 15-ին ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն. Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1287